# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 1699-Ն ԵՎ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 10-Ի N 113-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Նախագիծ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ -Ն**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 1699-Ն ԵՎ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 10-Ի N 113-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի պահանջներով Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հոկտեմբերի 26-ի <Ճանապարհային լուսացույցներին ներկայացվող պահանջները, դրանց կիրառման ու տեղակայման կանոնները և ճանապարհային նշաններին ներկայացվող պահանջները, դրանց կիրառման ու տեղակայման կանոնները հաստատելու մասին>> N 1699-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման N1 հավելվածի 43-րդ կետի 3-րդ պարբերության <<եթե բնակավայրերում տվյալ ուղղությամբ գոտիների թիվը պակաս է երեքից (բնակավայրերից դուրս՝ երկուսից ոչ ավելի)>> բառերը փոխարինել <<եթե բնակավայրերում տվյալ ուղղությամբ գոտիների թիվը ավելի չէ երեքից (բնակավայրերից դուրս՝ ավելի չէ երկուսից)>> բառերով:

2) որոշման N3 հավելվածի 8-րդ կետի առաջին պարբերությունը լրացնել նոր նախադասությամբ հետևյալ բովանդակությամբ <<Նշանների չափերը պետք է համապատասխանեն ԳՕՍՏ Ռ 52290-2004 ստանդարտի պահանջներին:>>:

3) որոշման N3 հավելվածի 44-րդ կետի երկրորդ պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ՝

- Մեծատառի $հ_{մ}$բարձրությունից կախված՝ լատինական և ռուսական այբուբեններով նշանների վրա տառանշման մակերեսի լայնությունը սահմանված է ԳՕՍՏ Ռ 52290-2004 ստանդարտով, իսկ հայկական

այբուբենով նշաններին` ԳՕՍՏ 10807-78 ստանդարտով:¦:

2. ՀՀ կառավարության 2008 թվականի հունվարի 10-ի §Ճանապարհային գծանշմանը ներկայացվող պահանջները, դրա կիրառման կանոնները, ճանապարհային ցանկապատներին ներկայացվող պահանջները, դրանց կիրառման և տեղակայման կանոնները, ուղղորդ սարքվածքներին ներկայացվող պահանջները, դրանց կիրառման և տեղակայման կանոնները և արհեստական անհարթություններին ներկայացվող պահանջները և դրանց կիրառման կանոնները հաստատելու մասին¦ N 113-Ն որոշման N1 հավելվածի 87-րդ կետը լրացնել նոր պարբերությամբ հետևյալ բովանդակությամբ`

- **Աղյուսակ 5. Գծանշման գծերի լայնությունը**

| Երթևեկու-կության գոտիների քանակը | Բաժանիչ գոտու առկայու-թյունը | Հակադիր ուղղություններով հոսքերի բաժանումը, ***մետր*** | | | | | Երթևեկության գոտիների նշումը, ***մետր*** | | | Երթևեկ<br>մասի եզ<br>նշումը, ***մ*** | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | **1.1** | **1.3** | **1.5, 1.6** | **1.9** | **1.11** | **1.1, 1.5 1.7** | **1.9** | **1.11** | **1.2.1** | **1.** |
| 2 | Չկա | 0,10 | - | 0,10 | - | 0,10 | 0,10 | - | 0,10 | 0,10 | 0, |
| 3 | | 0,15 | | 0,15 | | | | 0,10 | | | - |
| 4 և 5 | | - | 0,15 | - | 0,15 | (0,10) | 0,15 (0,10) | 0,15 (0,10) | 0,15 (0,10) | 0,15 (0,10) | |
| ≥ **6** | | | 0,20 (0,15) | | 0,20 ( 0,15) | | | | | 0,20 (0,15) | |
| ≥ **4** | Կա | | - | | - | | 0,15 | - | | | |

Փակագծերում նշված են բնակավայրերում գծանշման գծերի լայնության թույլատրելի նշանակությունները:¦